

ՀՀ Գեղարքունիքի մարզպետ Ռաֆիկ Գրիգորյանի ելույթը Հայաստանի Հանրապետության Անկախության 25-րդ տարեդարձին նվիրված հանդիսավոր նիստում

Սիրելի հայրենակիցներ

1991 թվականի սեպտեմբերի 21-ին հայ ժողովուրդը, օգտվելով ազատ կամքի արտահայտման իր իրավունքից, միաձայն քվեարկեց ԽՍՀՄ կազմից դուրս գալու եւ Ազատ ու Անկախ ազգային հայրենիք կերտելու օգտին:

Հայ ժողովրդի քաղաքական կամքի արտահայտությունը, սակայն, հարկ եղավ պաշտպանել կենաց-մահու պատերազմով, որը մեզ պարտադրվեց մեր արտաքին թշնամու կողմից: Հայաստանն ու Արցախը, մեկ բռունցք դարձած, կարողացան հաղթող դուրս գալ այդ պատերազմում եւ անառիկ պահել մեր երկրի սահմանները:

Ժամանակի ընթացքում նորանկախ Հայաստանի Հանրապետությունը դարձավ միջազգային իրավունքի սուբյեկտ, Միավորված Ազգերի Կազմակերպության, Եվրախորհրդի, Անկախ Պետությունների Համագործակցության, Եվրասիական Տնտեսական Միության, Հավաքական անվտանգության կոլեկտիվ պայմանագրի լիիրավ անդամ երկիր՝ իր տեղը, դերն ու կշիռն ունենալով աշխարհում խաղաղության եւ անվտանգության պահպանման ամենատարբեր ձեռնարկներում:

Հայաստանի Հանրապետությունն իր ստեղծման ու կայացման առաջին իսկ պահից հանդիսացավ հայ ժողովրդի անվտանգության գլխավոր երաշխավորը, համայն հայությանը իր շուրջը համախմբող բացառիկ ուժը:

Հայաստանի եւ Արցախի անվտանգության գլխավոր երաշխավոր հանդիսացող Հայոց բանակը ծնվեց ու հասակ առավ Արցախյան գոյամարտում, տարավ անշրջելի հաղթանակներ եւ հիմա էլ շարունակում է թշնամուն խաղաղություն պարտադրել: Նրա հզոր ուժը

դրսեւորվեց նաեւ 2016 թվականի Ապրիլյան հերոսամարտերում, երբ թշնամու բանակը հերթական անգամ փորձեց դավադիր հարձակմամբ տիրանալ Արցախին, սակայն կրեց հերթական ծանր պարտությունը:

Հայաստանի Հանրապետությունն Անկախության հռչակման օրից հստակ քայլերով ընտրել է ժողովրդավարական պետության կերտման ուղին, որտեղ օրենքով պաշտպանված են մարդու սահմանադրական իրավունքները, ազատ կամքի արտահայտման միջոցներն ու հնարավորությունները :

Հայաստանի Հանրապետությունը դարձել է համայն հայության միակ հայրենիքը, որի ջանքերն ուղղված են հայ ազգի պահպանմանն ու զարգացմանը, Հայոց ցեղասպանության ճանաչմանն ու դատապարտմանը, բաժան-բաժան եղած ու անջատված հայկական տարածքների միավորմանը, ազգային եւ համամարդկային արժեքների վերակերտմանը:

Հայաստանի Երրորդ Հանրապետության կերտման եւ զարգացման մեջ իր ուրույն տեղն ունի Գեղարքունիքի մարզը: Արցախյան գոյամարտին եւ Հայաստանի Հանրապետության սահմանների պաշտանությանը մեր մարզից մասնակցել են 1026 ազատամարտիկներ, որոնցից 326-ն անմահացան փառքի ճամփաներում՝ իրենց կյանքը նվիրաբերելով հայրենիքին: Նրանց անմահության երթին միացան նաեւ 1994 թվականի մայիսյան հրադարարից ի վեր եւ 2016 թվականի Ապրիլյան հերոսամարտերում ընկած տասնյակ քաջ հայորդիներ, որոնց անունները հավերժ կմնան հայ սերունդների հիշողության մեջ: Ապրիլյան հերոսամարտերի ընթացքում եւս մեր մարզի բազմաթիվ զինծառայողներ ու կամավորներ աչքի ընկան իրենց խիզախությամբ ու նվիրվածությամբ: Անկախության տարիներին մարզում պետական միջոցներով եւ այլ կառույցների կողմից իրականացվել են սոցիալ-տնտեսական եւ կենսական նշանակության որոշակի ծրագրեր, զգալի ձեռքբերումներ են

արձանագրվել մարզի կենսագործունեության ամենատարբեր ոլորտներում: Սակայն առավել զգալի պետական ներդրումներ ու լայնածավալ շինարարական աշխատանքներ մարզի առողջապահության, կրթության, գյուղատնտեսության, քաղաքաշինության, ճանապարհաշինության, ջրամատակարարման, բնապահպանության եւ այլ ոլորտներում կատարվել են վերջին 10 տարիների ընթացքում:

Կրթության եւ մշակույթի ոլորտում պետական միջոցներով հիմքից կառուցվել կամ հիմնանորոգվել են դպրոցական, նախադպրոցական եւ մշակութային հաստատությունների շենքեր: Ընթացքի մեջ են դպրոցաշինական նոր ծրագրերը, որոնց շրջանակներում առաջիկա տարիներին կունենանք ամբողջովին հիմքից կառուցված կամ նորոգված, արդի չափորոշիչներին համապատասխան դպրոցական շենքեր մարզի բոլոր բնակավայրերում: Լրջագույն ձեռքբերում պետք է համարել Գավառի պետթատրոնի շենքի կառուցումը, որն առաջին տիպային թատրոնի շենքն է Հայաստանի Հանրապետության անցած 25 տարիների պատմության մեջ: Արդիականացվել են Գավառի բժշկական կենտրոնի, ճամբարակի առողջության կենտրոնի եւ Սեւանի պոլիկլինիկայի շենքերը, հիմքից կառուցվել եւ կահավորվել ու բուժսարքավորումներով վերազինվել են բուժամբուլատորիաների կամ առողջության առաջնային պահպանման կենտրոնների շենքերը: Ընթացքի մեջ է Սեւանի բժշկական կենտրոնի նոր շենքի շինարարությունը, նախագծման փուլում՝ Մարտունու բժշկական կենտրոնի արդիականացման ծրագիրը: Մեր կողմից համապատասխան քայլեր են ձեռնարկվում նաեւ առողջապահական հաստատությունները բժշկական բորձրորակ կադրերով ապահովելու ուղղությամբ:

Բավականին պատկառելի ներդրումներ են կատարվել ճանապարհաշինության բնագավառում: Հիմնանորոգվել են

հարյուրավոր կիլոմետրերի հասնող միջպետական, մարզային եւ համայնքային նշանակության ճանապարհներ մեր մարզի բոլոր տարածաշրջաններում: Այս ոլորտում, թերեւս, ամենածանրակշիռ ձեռնարկներ պետք է համարել Սելիմի, Վարդենիս-Մարտակերտ միջպետական նշանակության ճանապարհների եւ Սեւան-Դիլիջան ավտոճանապարհային թունելի կառուցումը, որոնցով մեծապես խթանվում է տրանսպարտային հաղորդակցությունը թե՛ Հայաստանի տարբեր մարզերի ու Արցախի, թե՛ մեր հարեւան պետությունների միջեւ՝ մեծապես նպաստելով մեր երկրի տնտեսական աշխուժացմանը: Տեսանելի զարգացում է ապրել նաեւ ջրամատակարարման եւ ջրահեռացման համակարգը: Ամբողջությամբ նորացվել են Սեւան, Մարտունի, Գավառ, Ճամբարակ քաղաքների, երկու տասնյակից ավել գյուղական համայնքների ջրամատակարարման համակարգերը, կառուցվել եւ շահագործվել Վարդենիսի, Մարտունու եւ Գավառի կոյուղացման համակարգերը եւ մաքրման կայանները, որոնց շնորհիվ Սեւանա լճի համար լուծվել է բնապահպանական կարելորագույն հիմնախնդիր: Գազաֆիկացվել է մարզի բնակավայրերի մեծ մասը, իսկ բնական գազ սպառող բաժանորդները կազմում են մարզի ընդհանուր բնակչության թվի մոտ 92 տոկոսը:

Բնապահպանության ոլորտում անգնահատելի ձեռքբերում էր Սեւանա լճի ջրային պաշարների դինամիկ աճի ապահովումը, ինչի արդյունքում 2003-2016 թվականների ընթացքում Սեւանի մակարդակը բարձրացել է մոտ 4 մետրով: Իսկ «Սեւանա լճի իշխանի պաշարների վերականգնման եւ ձկնաբուծության զարգացման համալիր ծրագրի» շրջանակներում Կարճաղբյուրում շահագործված Սեւանի իշխանի մանրածկան վերարտադրության եւ ձկնամթերքի վերամշակման գործարանները ոչ միայն հիմնովին լուծում են տալիս Սեւանի ձկնապաշարի

պահպանության ու վերարտադրության խնդրին, այլ նաեւ մարզում բացում են նոր աշխատատեղեր:

Մշակվել է ԶԶ կառավարության հաստատմանն է ներկայացվել Գեղարքունիքի մարզի 2017-20 թվականների սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիրը, որի իրականացումը նախատեսում է տասնյակ միլիարդավոր դրամների նոր ներդրումներ, տնտեսության հիմնարար զարգացում, նոր աշխատատեղերի ստեղծում:

Գեղարքունիքի մարզը Հայաստանի Անկախության տարիներից ի վեր արտաքին կապեր է հաստատել ինչպես Ռուսաստանի Դաշնության, այնպես էլ՝ եվրոպական տարբեր երկրների առանձին վարչական միավորների հետ, սակայն առավել գործնական շփումները շարունակվում է զարգանում են Ֆրանսիայի Հանրապետության Իզերի դեպարտամենտի ընդհանուր խորհրդի հետ:

Հայրենակիցներ...

Հայաստանի Անկախության անցած 25 տարիների ընթացքում հայ մարդը երբեք չի դադարել իր հայրենիքի ազատությունը պաշտպանելու, իր երկիրը շենացնելու եւ ավելի բարեկեցիկ դարձնելու ձգտումից: Իսկ Ապրիլյան հերոսամարտերը եւս մեկ անգամ ապացուցեցին, թե որքան է մեր ժողովուրդը, մանավա՛վանդ նույն Անկախության տարիներին ծնված ու հասակ առած սերունդը, անձնազոհ կերպով կանգնած մեր հայրենիքի պաշտպանության դիրքերում:

Անկախության 25 տարիները վաղուց դարձել են այն հիմնաքարերը, որոնց վրա մենք պետք է վեր բարձրացնենք շատ ավելի հզոր, կենսունակ, ապահով ու բարեկեցիկ Հայաստանը՝ համայն հայության միակ ու հավերժական հայրենիքը:

Հայաստանի Հանրապետության Անկախության 25-րդ տարեդարձի կապակցությամբ ջերմորեն շնորհավորում են հայ ժողովրդին, մաղթում

բոլորին խաղաղ երկինք, քաջ առողջություն, անսպառ եռանդ, նորանոր
հաղթանակներ:

Շնորհակալություն